ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոմպասս ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/134 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
3	Բազմաֆունկցիոնալ լազերային սարք՝ MFP տիպի լազեր: Սարքը ունի պատճենահանող սարք, սկաներ, տպիչ, առավելագույն չափը A4 ներառյալ, սև և սպիտակ, լազերային տպագրության տեխնոլոգիա, առավելագույն թույլտվություն b/w տպագրության համար 600x600 dpi, տպման արագությունը՝ 38 էջ մեկ րոպեում (A4): Էջերի քանակը ամսական՝ նախատեսված 80000 (A4), առաջին սև-սպիտակ տպագրության ժամանակը՝ առավելագույնը 6,3 վրկ: Ունի ավտոմատ դուպլեքս տպագրության հնարավորություն: Սկաների օպտիկական կետայնության խտությունը՝ 600x600 dpi, սկանավորման արագությունը՝ 29 էջ/պատկեր մեկ րոպեում (A4): Ավտոմատ դուպլեքս թղթի մատակարարումը՝ 50 թերթ: Պատճենահանման առավելագույն թույլտվությունը՝ 600x600 dpi ներառյալ: Պատճենման արագությունը՝ 38 էջ մեկ րոպեում (A4), պատկերի մեծացման չափը 25-400% ներառյալ: Նախատեսված թղթի քաշը 60-175 գ/մ2 ներառյալ: Հիշողության չափը՝ 512 ՄԲ, պրոցեսորի հաճախականությունը՝ 1200 ՄՀց: Ինտերֆեյսներ USB 2.0, Ethernet (RJ-45), Wi-Fi, աջակցություն՝ PCL 5, PCL 6, PDF: Windows, iOS, Android OS-ի համար ծրագրերի հետ աշխատելու հնարավորություն: Տեղեկատվական էկրան՝ LCD: Կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: Առանց քարթրիջի լիցքավորման կոդի կամ կոդի բացումը վաճառողի կողմից: Ապրանքները նոր են՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և/կամ հավաքումը, փորձարկումը իրականացվում է Վաճառողի կողմից իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է

	շտկել ՀՀ-ում հավատարմագրված սերվիս կենտրոնում /դետալների փոխարինում/ կամ ապրանքը փոխարինել նորով: ՀՀ-ում հավատարմագրված սերվիս կենտրոն տեղափոխումն ու վերադարձը իրականացվում է Վաճառողի կողմից: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ (հեռ.՝ 010599699 (564)): Պայմանագրի կատարման փուլում Վաճառողը պետք է ապրանքների համար ներկայացնի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ: Պետք է ներկայացնի նաև ՀՀ-ում հավատարմագրված մեկ սերվիս կենտրոնի տվյալները: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է ներկայացված լինի իր արտադրողի պաշտոնական կայքէջում, որտեղ պետք է հստակ արտացոլված լինեն ապրանքի մոդելը և պահանջվող տեխնիկական բնութագրերի ցուցանիշները:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО КОМПАСС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/134 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
3	